10) ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կենսաթոշակները նշանակելուն (վերահաշվարկելուն) և վճարելուն, ինչպես նաև «Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամենամսյա դրամական օգնություն նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունները կարգավորելու մասին» N 1735-Ն որոշումը, ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ին: Որոշումը պաշտոնապես հրապարակվել է N ՀՀՊՏ 2011.01.19/3(806) ՀՀ պաշտոնական տեղեկագրում:

11) ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 16-ի «Պետական կենսաթոշակների մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին», «Շահույթահարկի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին», «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության նախագահի, ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, կառավարության անդամների, սահմանադրական դատարանի անդամների, ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի և դատավորների կողմից իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ զոհվելու կամ աշխատունակությունը լրիվ կորցնելու դեպքում նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկերը հաստատելու մասին» N 113-Ս որոշումը, ուժի մեջ է մտել 2011 թվականի փետրվարի 17-ին:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 707-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 275-Ն որոշման համաձայն, 2010 թվականի նոյեմբերի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 10500 դրամ՝ նախկին 8000 դրամի փոխարեն: 2011 թվականի ընթացքում հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա համար տրվող հավելման նոր չափեր ՀՀ կառավարության կողմից չեն սահմանվել:

2011 թվականի ընթացքում համակարգում հաշվառված կենսաթոշակատուների թվաքանակը կազմել է 509312 անձ, իսկ միջին կենսաթոշակի չափը՝ 27067 դրամ:

Կենսաթոշակատուների թվի նվազումը պայմանավորված է բնակչության (այդ թվում կենսաթոշակատուների) արտագաղթով, իսկ կենսաթոշակի միջին չափի նվազումը (հիմնական կենսաթոշակի ավելացման պարագայում) պայմանավորված է աշխատանքային ստաժի չափով, ավելացել է սոցիալական կենսաթոշակ ստացողների (այդ թվում հաշմանդամ երեխաների) թիվը, հաշմանդամ կենսաթոշակատուների թիվը, որոնց աշխատանքային ստաժի չափը հիմնականում ցածր է:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում իրականացվող բարեփոխումներ

2011 թվականին կենսաթոշակային ապահովության բնագավառի հիմնական առաջնահերթությունը եղել է կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը:

Մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ կատարվել են բազմաստիճան կենսաթոշակային համակարգի գործունեությունն ապահովող միջոցառումների իրականացումն ապահովելու աշխատանքներ:

Ի կատարումն ՀՀ կառավարության գործունեության 2011 թվականի միջոցառումների ծրագրի, ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման և ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 16-ի N 113-Ս որոշման՝ մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել պետական կենսաթոշակային համակարգի գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական իրավական ակտերը, ինչպես նաև մշակվել և ընդունվել են կամավոր կենսաթոշակային ապահովագրության գործունեությունն ապահովող համապատասխան կարգերն ու գերատեսչական իրավական ակտերը:

Աշխատանքներ են տարվել նաև կենսաթոշակային հաշիվների վարում ապահովող համակարգի մշակման ուղղությամբ:

Շահառուներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով գործարկվել է կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգը: Այսօր կենսաթոշակը անկանխիկ եղանակով (բանկի միջոցով) ստանում է ավելի քան 100000 կենսաթոշակառու:

Կատարվել են նաև կենսաթոշակային համակարգի տեղեկատվական ենթակառուցվածքը զարգացնելու աշխատանքներ:

Մասնավորապես՝

մեկ միասնական համակարգային ցանցում ընդգրկվել են կենսաթոշակ նշանակող և ՔԿԱԳ տարածքային մարմինները,

մշակվել և հաստատվել են այլ տեղեկատվական համակարգերում առկա տեղեկատվությունը ինքնաշխատ եղանակով ստանալն ապահովող՝ ՀՀ կառավարության որոշումներ,

ներդրվել է բնակչության պետական ռեգիստրից անձնագրային և բնակչության վայրի մասին տվյալներն ինքնաշխատ եղանակով ստանալն ու կիրառելն ապահովող համակարգային ծրագիր,

մշակվել և ներդրվել է ՔԿԱԳ մարմիններից քաղաքացիների մահվան վերաբերյալ տեղեկատվությունն ինքնաշխատ եղանակով ստանալն ապահովող համակարգային ծրագիր,

ձևավորվել է կենսաթոշակային համակարգի կենտրոնացված տեղեկատվական շտեմարան, որի փորձնական շահագործումը և հիմնական ներդրումը նախատեսվում է 2012 թվականին:

Վերը նշված միջոցառումներն էապես նվազեցրել են կոռուպցիոն ռիսկերը, միտումնավոր և պատահական սխալների հնարավորությունը, և լուծումներ են տրվել տարվա ընթացքում արձանագրված խնդիրներին:

2011 թվականին մշակվել և ընդունվել է նաև «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով լուծումներ են տրվել ժամանակավոր անաշխատունակության նպաստների նշանակման և վճարման կապակցությամբ առկա խնդիրներին, ինչպես նաև ընդունվել է «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

3. Սոցիալական աջակցություն

Պետական նպաստների (դրամական օգնության) բնագավառ. Պետական նպաստները նշանակվում և վճարվում են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին համապատասխան՝ որպես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված դրամական օգնության առանձին ձև:

Պետական նպաստների նշանակման և վճարման կարգերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Պետական նպաստների՝ ընտանեկան նպաստ, երեխայի խնամքի նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, գոհված՝ Հայաստանի ազգային հերոսի, ինչպես նաև Մարտական խաչ շքանշանով պարևարված անձի ընտանիքի նպաստի նշանակման և վճարման գործընթացն իրականացնում են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները (այսուհետ՝ ՄՕՏՍ), որոնք պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի առանձնացված ստորաբաժանում են (այսուհետ՝ տարածքային մարմին):

Պետական նպաստների համակարգը՝ որպես ծայրահեղ աղքատության հաղթահարման գործիք, կարիք ունի վերափոխման՝ ընդհանուր աղքատության կրճատման խնդիրների լուծման և կայուն ընտանիքների ձևավորմանն օժանդակելու համար: Սոցիալական քաղաքականությունն ուղղվելու է սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերից բնակչության արտագաղթի կանխմանը, այդ բնակավայրերի բնակչության սոցիալական ակտիվության բարձրացմանը, որը կհանգեցնի սոցիալական անտարբերության նվազմանը:

Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն

Ընտանեկան նպաստի ծրագրի հասցեականության մեծացման հարցը մշտապես դիտարկվել է որպես սոցիալական աջակցության ոլորտի մարտահրավեր և դրան հասնելու նպատակով իրականացվող միջոցառումները հիմնականում իրականացվել են 4 ուղղությամբ՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, որը հիմնվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության տվյալների վրա, վարչարարության բարելավում և տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստում և բնակչության իրազեկում:

Ընտանեկան նպաստի համակարգում իրականացված բարեփոխումներն իրականացվել են ԱՀՌԾ և ԿԶԾ սահմանած ռազմավարական ուղղություններին, ՀՀ ԱՎԾ ամենամյա տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների տվյալներին համապատասխան՝ փոփոխելով ընտանիքների անապահովության գնահատման կարգը:

Ընտանեկան նպաստի իրավունքը որոշվում է ընտանիքի անապահովության միավորով, որը որոշվում է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2317-Ն որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով: Համաձայն այդ կարգի ընտանիքի (տնային տնտեսության) անապահովության աստիճանը գնահատելու նպատակով հաշվի են առնվում աղքատությունը բնութագրող անուղղակի ցուցանիշներ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, ընտանիքում անաշխատունակ անդամների թիվը, բնակավայրը, ընտանիքի բնակարանային պայմանները, ընտանիքի միջին ամսական եկամուտը և այլն:

Վերոհիշյալ յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր թվային արժեքը, որոնց արտադրյալով որոշվում է ընտանիքի անապահովության միավորը: Որքան մեծ է այդ միավորն այնքան անապահով է համարվում այդ ընտանիքը: Ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմի մեջ մտնում են ընտանիքի անդամների աշխատանքի վարձատրությանն ուղղված հաշվարկված, վճարման ենթակա միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները, կենսաթոշակը, գործազրկության նպաստը, ինչպես նաև անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտը: 2011 թվականի համար ընտանեկան նպաստի իրավունքի ճանաչման սահմանային միավորը սահմանվել է «30.00» միավոր:

ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1763-Ն որոշմամբ 2011 թվականի հունվարի 1-ից ընտանեկան նպաստի համակարգում ներդրվեց առցանց եղանակով անհրաժեշտ տվյալներ ստանալու մեխանիզմը՝ ընտանիքի կազմը որոշվում է ՀՀ բնակչության պետական ռեգիստրից էլեկտրոնային առցանց հարցման միջոցով ստացված տվյալների հիման վրա: Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարությունն քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից ևս, անհրաժեշտ բոլոր տվյալները ստացվում են առցանց եղանակով: Նշված միջոցառումների արդյունքում հնարավորինս կրճատվում են քաղաքացիների կողմից ներկայացվող տեղեկանքների թիվը:

Նույն որոշմամբ ամբողջությամբ վերանայվել է անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտի հաշվարկման կարգը:

Եթե ընտանիքը տնօրինում է մեկ անասնատեսակ, որի քանակը չի գերազանցում ՀՀ կառավարության սահմանած՝ ըստ յուրաքանչյուր տեսակի համար որոշակի թվով գլխաքանակից, ապա անասնապահությունից ստացվող եկամուտը ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի մեջ չի հաշվարկվում:

Եթե ընտանիքը տնօրինում է մեկից ավելի անասնատեսակ կամ սահմանված անասնազվաքանակից ավելի, ապա անասնապահությունից ընտանիքի ստացվող եկամուտը հաշվարկվում է տարեկան 150000 դրամ եկամուտը գերազանցող գումարի մասով, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր անասնատեսակի համար սահմանած տարեկան եկամուտից:

Միաժամանակ, անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտ չի հաշվարկվում Հայաստանի Հանրապետության սահմանամերձ մի շարք՝ Տավուշի մարզի Չինարի, Այգեձոր, Այգեպար, Պառավաքար, Ներքին Կարմիր աղբյուր, Մոսեսգեղ, Կայան, Վազաշեն, Այգեհովիտ, Ազատամուտ, Սարիգյուղ, Բերքաբեր, Օաղկավան, Կիրանց, Բերդավան, Դովեղ, Բարեկամավան, Կոթի, Ոսկեվան, Ոսկեպար, Բաղանիս, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Բարձրունի, Խնձորուտ, Խաչիկ, Նոր Ազնաբերդ և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխա, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վահան, Զիլ, Թթուջուր և Արտանիշ բնակավայրերում բնակվող ընտանիքների համար:

2011 թվականին ընտանեկան նպաստի ծրագրում կատարված կարևորագույն փոփոխություններից է նաև հանրապետությունում կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շրջանակում առանձին խմբի անձանց տրամադրվող դրամական օգնությունների միասնական համակարգի ստեղծմամբ՝ ընտանեկան նպաստի ծրագրից ՀՀ պաշտպանության ժամանակ գոհված (մահացած) անձանց ընտանիքներին, անկախ այդ ընտանիքների անապահովության մակարդակից, ընտանեկան նպաստի իրավունքի անվերապահ ճանաչելու դրույթի հանելը: Եթե ՀՀ պաշտպանության ժամանակ գոհված (մահացած) անձանց ընտանիքները պահպանում են իրենց ընտանեկան նպաստի իկրավունքը, ապա այդ ընտանիքները, բնականաբար, շարունակում են ստանալ ընտանեկան նպաստը: Սակայն հարկ է նշել, որ նման ընտանիքների թիվն անհամեմատ փոքր է, մինչ այդ դրույթը գործելը՝ այդ հիմքով ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թվից: Այս միջոցառումը ևս ուղղված է ընտանեկան նպաստի հասցեականության մեծացմանը:

Ընտանեկան նպաստի ծրագրում արված փոփոխություններն իրենց արտահայտությունն են գտել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, նաև նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում: Այսպես, ստորև ներկայացվում է փոփոխությունների դինամիկան.

Աղյուսակ 1. Ընտանեկան նպաստը Հայաստանի Հանրապետությունում 2007-2011 թթ.

	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	22.14	21.54	19.16	17.11	14.91
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	72.29	73.25	73.4	78.77	78.94
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	16.24	15.77	14.0	13.50	11.77
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքներից)	75.90	76.34	81.19	78.28	78.07
ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ (մլրդ դրամ)	26.407	29.388	32.324	31.022	35.497
Նպաստառու ընտանիքների թիվ	124689	121160	107493	105005	91575
Նպաստի միջին չափ (դրամ)	17500	21100	23560	26850	26850

Ինչպես և նախորդ տարիներին, 2011 թվականին նույնպես նվազել է համակարգում հաշվառված, այդ թվում՝ նպաստառու ընտանիքների թիվը: Սակայն հարցը 2008-2010 թթ. աղքատության մակարդակի բարձրացման համատեքստում դիտարկելու դեպքում, նպաստառու ընտանիքների թվի նվազումը գնահատվում է որպես խնդրահարույց:

2011 թվականին պահպանվել է նպաստառու ընտանիքների կազմում երեխա ունեցող ընտանիքների բարձր տեսակարար կշիռը, ինչը համահունչ է պետության որդեգրած քաղաքականությանը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաների առաջնահերթության սկզբունքին:

Սակայն հակ է նշել, որ 2010-2011թթ. երեխա ունեցող ընտանիքների տեսակարար կշիռը նպաստառու ընտանիքների մեջ նախորդ տարվա համեմատությամբ համապատասխանաբար՝ 0.83 և 0.2 տոկոսային կետով նվազել է: Այս հանգամանքը կարելի է բացատրել ծրագրի հասցեականության մեծացմանն ուղղված միջոցառումներով, մասնավորապես ծրագրում ընդգրկված՝ աշխատելու հանգամանքը կամ աշխատավարձի իրական չափը թաքցնող անձանց հայտնաբերմամբ:

Քանի որ աշխատելու հանգամանքը կամ աշխատավարձի իրական չափը թաքցնող անձինք հիմնականում երիտասարդներ են, ուստի և այդ պատճառով նպաստառության ոչ ենթակա ճանաչված ընտանիքների շարքում երեխա ունեցող ընտանիքներն ավելի մեծ տոկոս են կազմել:

2011 թվականին շարունակվել է ընտանեկան նպաստի համար նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես բազմազավակ ընտանիքներին, հաշվի առնելով նաև ընտանիքի բնակության վայրը՝ բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր:

Ընտանեկան նպաստի չափը որոշվում է նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անդամի (երեխայի) համար տրվող հավելումը, որի չափը տարբերակվում է էլնելով տվյալ ընտանիքի անապահովության միավորից, ընտանիքի բնակության վայրից, ինչպես նաև ընտանիքում երեխաների թվից:

2011 թվականին ընտանեկան նպաստի բազային մասի, երեխաներին տրվող հավելումների, ինչպես նաև միանվագ դրամական օգնության չափերը, պահպանվել են նույնը՝ ինչ 2010 թվականի համար:

Ըստ անապահովության միավորի՝ հավելման չափերը տարբերակվում են երեք մակարդակով՝ առաջինը՝ 30.01-35.00 անապահովության միավորների տիրույթ, երկրորդ մակարդակը՝ 35.01-39.00, և երրորդը՝ 39.01 և ավելի: Այս տիրույթներում հավելման չափերը միմյանցից տարբերվում են 500 դրամով՝ որքան բարձր է անապահովության միավորը, այնքան բարձր է հավելման չափը:

Անապահովության միավորների յուրաքանչյուր տիրույթում հավելման չափը նույնպես տարբերակվում է, սահմանամերձ, ինչպես նաև բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքի երեխայի համար տրվող հավելումը 500 դրամով ավելի է տվյալ տիրույթի համար սահմանված հավելման չափից, իսկ եթե ընտանիքում երեխաների թիվը 4 և ավելի է, ապա նրանցից յուրաքանչյուրի համար տրվող հավելման չափը բարձր է ևս 1000 դրամով:

Այսպիսով 2010 թվականի առաջին 4 ամիսների համար բազային նպաստի չափը սահմանվել է 10000 դրամ, իսկ մայիս ամսից այն հավասարեցվել է 13500 դրամի: 2010 թվականի ամբողջ ընթացքում հավելման սահմանված չափերը տատանվել են 5500 դրամից մինչև 8000 դրամ: Ընտանիքի կազմում երեխա չունեցող ընտանիքի նպաստի չափը կազմում է 13500 դրամ (2010 թվականի առաջին 4 ամիսներին՝ 10000 դրամ), իսկ երեխա ունեցող ընտանիքի նպաստի չափը պայմանավորվում է ընտանիքի անապահովության միավորով, երեխաների թվով և բնակության վայրով:

2011 թվականի ընթացքում ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կազմել է 26850 դրամ (2010 թվականի առաջին 4 ամիսներին 26850 դրամ):

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով ընտանեկան նպաստի համակարգում սահմանվել են միանվագ օգնության նշանակման հստակ հիմքեր՝ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան, երեխայի առաջին դասարան ընդունվելու և ընտանիքի անդամի (եթե կենսաթոշակատու, աշխատող, ինչպես նաև առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ չէ) մահվան դեպքում՝ հուղարկավորության:

Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան միանվագ օգնության չափը սահմանվել է 50000 դրամ, երեխայի առաջին դասարան ընդունվելու համար միանվագ օգնության չափը՝ 25000 դրամ, իսկ ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ հուղարկավորության միանվագ օգնության ն չափը՝ 50000 դրամ:

Համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի կարճատև ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով՝ ՄՕՏՄ-ն սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ կարող է տվյալ ընտանիքին նշանակել հրատապ օգնություն՝ եռամսյակով: Հրատապ օգնություն նշանակելու հարցը կարող է քննարկվել յուրաքանչյուր եռամսյակ և ընդունվել որոշում հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու մասին: Հրատապ օգնության չափը սահմանվում է բազային նպաստի չափին հավասար, այսինքն 2011 թվականի համար՝ 13500 դրամ:

2011 թվականի ընթացքում իրականացվել են ընտանեկան նպաստի համակարգի հասցեականության մեծացմանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես ընտանեկան նպաստի տեղեկատվական բազայի տվյալները համադրվել են հարակից մի շարք այլ տեղեկատվական բազաներում առկա տվյալների հետ: Արդյունքում համակարգից դուրս են բերվել նպաստառության ոչ ենթակա ընտանիքներ և կրճատվել է նպաստառու ընտանիքների թիվը՝ հունվարի շուրջ 102 հազար ընտանիքի դիմաց՝ դեկտեմբերին՝ շուրջ 84 հազար ընտանիք կամ 2011թ. ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 120 հազար ընտանիքներից ընտանեկան նպաստ ստացել են ամսական միջինում 92265-ը՝ ընդհանուր հաշվառված ընտանիքների շուրջ 76,9%-ը, իսկ հրատապ օգնություն, միջինում 10363 ընտանիք կամ

ընդհանուր հաշվառվածների 8,6%-ը, նպաստի միջին չափը կազմել է 26850 դրամ: Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ դրամական օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 4501 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 8608 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 150 ընտանիքի:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ

Աղյուսակ 2. ՀՀ ԱՎԾ տվյալներով Հայաստանի Հանրապետությունում կենդանի ծնունդների թվաքանակն ըստ ծննդի հաջորդականության

	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
ՀՀ ընդամենը	37639	40105	41185	44413	44825	43340
Ընտանիքում 3-րդ երեխա	3758	4263	4520	5289	5683	5369
Ընտանիքում 4-րդ երեխա	705	708	761	849	929	899
Ընտանիքում 5-րդ և բարձր	304	332	342	372	378	351
3-րդ և բարձր (ընդամենը)	4767	5303	5623	6510	6990	6619

Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների 2011 թվականին արձանագրվել է 43340 ծնված, որը 2010 թվականի համեմատ նվազել է 3,3 %-ով:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը 2009 թվականից տարբերակվել է պայմանավորված ընտանիքում ծնված երեխայի թվով: Ընտանիքում ծնված առաջին և երկրորդ երեխաների համար այն սահմանվել է 50000 դրամ, իսկ երրորդ և հաջորդող յուրաքանչյուր երեխայի համար՝ 430000 դրամ: 2010 թվականին դրանք մնացել են նույն չափով:

Աղյուսակ 3. Երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ ստացած անձանց թիվը և ֆինանսական միջոցները

Տարիներ	2009թ.	2010թ.	2011թ.	
Ծնվածներ (ՀՀ-ում)		44466	44810	43340
Նպաստառուներ		45823	43033	38724
Ֆինանսական միջոցներ (հազ.դրամ)		5,067,585.0	4,719,455.0	4,271,800.0

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունի ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողը՝ մինչև երեխայի երկու տարեկան դառնալը: Տարիներ շարունակ նպաստի այս տեսակի չափը շատ ցածր էր՝ 3000 դրամ, որը 2009 թվականի հունվարի 1-ից բարձրացվեց 6 անգամ՝ այն հավասարեցնելով 18000 դրամի: Նպաստի չափի այդ բարձրացմամբ է հիմնականում պայմանավորված նպաստառուների թվի զգալի աճը՝ 2009 թվականի նախորդ տարվա նկատմամբ 59,0%, 2010 թվականին՝ շուրջ 8% և 2011 թվականին՝ 25,23%:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարմանը հատկացված ֆինանսական միջոցները 2011 թվականին 2008 թվականի համեմատությամբ աճել են շուրջ 13,29 անգամ:

Աղյուսակ 4. Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող նպաստառուների թիվը և նպաստների վճարմանը հատկացված ֆինանսական միջոցները 2008-2011թթ.

	2008թ.		2009թ.		2010թ.		2011թ.	
	նպաստառուներ (երեխա)	ֆինանսական միջոցներ (հազ. դրամ)	նպաստառուներ (երեխա)	ֆինանսական միջոցներ (հազ. դրամ)	նպաստառուներ (երեխա)	ֆինանսական միջոցներ (հազ. դրամ)	նպաստառուներ (երեխա)	ֆինանսական միջոցներ (հազ. դրամ)
ընդամենը	4489	219,807.0	7140	1,862,427.0	8058	2,568,462.0	10777	2,923,974.0

Ելնելով վերոգրյալից կարելի է նշել, որ վերջին երեք տարիների ընթացքում այս երկու նպաստների («Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» և «Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ») համար նախատեսված ֆինանսական միջոցների կտրուկ աճը պայմանավորվել է ինչպես նպաստների չափերի բարձրացմամբ, այնպես էլ

նպաստառուների թվի աճով: Ընդ որում, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունեցող ծնողների թվի աճը կարելի է ինչ որ տեղ բացատրել նաև տնտեսական ճգնաժամով: Մասնավորապես, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստառուին կրճատումներից խուսափելու հնարավորություն է ընձեռնվում, քանի որ խնամքի արձակուրդում գտնվելն առնվազն երեք տարով զերծ է պահում կրճատման ենթարկվելու վտանգից):

Սոցիալական աջակցության բնագավում իրականացվող բարեփոխումներ

Շարունակում է հրատապ մնալ սոցիալական աջակցության տարբեր ուղղությունների հասցեականության բարձրացման հարցը և այս տեսանկյունից առանձնանում է հատկապես ընտանեկան նպաստը:

Ընտանեկան նպաստի տրամադրման հիմքն ընտանիքի աղքատության մակարդակն է: Սակայն սովորաբար տնտեսություն ունեցող երկրի համար հասցեականության բարձր մակարդակ ապահովելը դժվարին խնդիր է, քանի որ ընտանիքին աղքատ ճանաչելու հարցում կիրառվում են անուղղակի ցուցանիշներ, որոնց ճշտման համար անհրաժեշտ է որակյալ վարչարարություն, և առկա է որոշ սուբյեկտիվիզմ:

Շատ աղքատ բնակչության ներկայացվածությունը համակարգում դեռևս ցածր մակարդակի վրա է, որը կարելի է բացատրել ինչպես շատ աղքատ բնակչության պասիվության դրսևորման արդյունք, այնպես էլ պետական մարմինների նկատմամբ վստահության պակասի կամ ծրագրի իրագրելման աշխատանքների բացթողումների արդյունք:

Կարևորվում են այդ ընտանիքների հայտնաբերման և համակարգում հաշվառելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ բնակչության իրագրելման մակարդակի բարձրացման, տնային այցելությունների միջոցով:

Եթե հանրապետությունում գործող երեք նպաստները դիտարկենք միաժամանակ, ապա առաջին հերթին աչքի է ընկնում այն հանգամանքը, որ այդ երեք նպաստներն առավելապես ուղղված են երեխա ունեցող ընտանիքներին:

Համաձայն ՀՀ կառավարության գործունեության ծրագրի նախատեսվում է պետական նպաստների համակարգը համապատասխանեցնել սոցիալական պահովության եվրոպական օրենսգրքով նախատեսված նորմերին, որն առաջին հերթին նշանակում է Հայաստանում գործող ընտանեկան նպաստի ծրագրի վերափոխումը եվրոպական ստանդարտներին համապատասխան՝ ընտանեկան նպաստի, այսինքն նպաստ երեխա ունեցող ընտանիքների համար: Սակայն այս նպաստի տեսակի ներմուծումը չի բացառում աղքատ ընտանիքների դրամական օգնության տրամադրման համակարգի պահպանումը՝ երաշխավորված եկամուտներ չունեցող ընտանիքների դրամական օգնություն:

Այսպիսով աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարության համատեքստում քննարկվում են դրամական օգնության քաղաքականության արմատական բարեփոխումները՝ նախատեսելով պետական նպաստներ՝ ընտանեկան նպաստ, աղքատության նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ (ապագայի կապիտալ՝ բազմազավակ ընտանիքների համար), նպատակային նշանակություն ունեցող դրամական օգնություններ՝ հաշմանդամ երեխա խնամող ընտանիքի օգնություն, բնակարանային նպաստ:

Միաժամանակ կարևորվում է սոցիալական ծառայությունները փաթեթով տրամադրելու խնդիրը: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը միջոց է սոցիալական ծառայությունների որակը և մատչելիությունը բարձրացնելու, դեպի հաճախորդները կողմնորոշելու, դրանց գնահատման և մշտադիտարկման, ինչպես նաև ամբողջ գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Նշված համակարգին անցնելու գործընթացը բավականին երկարատև է, այն պետք է իրականացվի ատիճանաբար և առնչվում է կառավարման ոլորտի տարբեր ճյուղերի: Համակարգի ներդրման համար հարկ է իրականացնել իրավաստեղծ ծավալուն աշխատանք, հստակեցնել յուրաքանչյուր օղակի լիազորությունների շրջանակները, ինչպես նաև համատեղ աշխատանքի եզրերը, մշակել մեխանիզմները, դրանց նորմացույցերը և այլն:

Աղյուսակ 5. 2009-2012թթ. ընտանեկան նպաստի բազային մասի, հավելումների, միանվագ դրամական օգնությունների չափեր

		2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	
Սահմանային միավոր		30.00	30.00	30.00	30.00	
Նպաստի բազային մաս		10000	10000	13500	16000	
Նպաստի բազային մաս՝ 2010թ. մայիսի 1-ից			13500			
Յուրաքանչյուր մինչև 18 տարեկան անդամին տրվող հավելում	Տարբերակում					
	30.01-35.00	4 և ավելի անչափահաս երեխաներ դեպքում (բազմազավակ ընտանիք)	5500	5500	5500	5500
		բ/լ և ա/մ բնակավայրերում	6500	6500	6500	6500
		բ/լ և ա/մ բնակավայրերում բազմազավակ ընտանիք	6000	6000	6000	6000
		բ/լ և ա/մ բնակավայրերում բազմազավակ ընտանիք	7000	7000	7000	7000
	35.01-39.00		6000	6000	6000	6000
		բազմազավակ ընտանիք	7000	7000	7000	7000
		բ/լ և ա/մ բնակավայրերում	6500	6500	6500	6500
		բ/լ և ա/մ բնակավայրերում բազմազավակ ընտանիք	7500	7500	7500	7500
	39.01 և ավելի		6500	6500	6500	6500
		բազմազավակ ընտանիք	7500	7500	7500	7500
		բ/լ և ա/մ բնակավայրերում	7000	7000	7000	7000
բ/լ և ա/մ բնակավայրերում բազմազավակ ընտանիք		8000	8000	8000	8000	
հրատապ օգնություն		10000	10000	13500	13500	
հրատապ օգնություն՝ 2010թ. մայիսի 1-ից			13500	13500	13500	
միանվագ դրամական օգնություն, այդ թվում՝						
երեխայի ծննդյան		50000	50000	50000	50000	
ընտանիքում 3-րդ և դրանից հետո ծնված երեխայի համար		50000	50000	50000	50000	
առաջին դասարան ընդունվելու		25000	25000	25000	25000	
ընտանիքի անդամի մահվան կապակցությամբ		50000	50000	50000	50000	
ֆինանսական միջոցներ / մլրդ դրամ		32.324	31.022	35.497	35.497	
միջին նպաստ		23560	23350	26850	26850	
Միջին նպաստ՝ 2010թ. մայիսի 1-ից			26850			
նպաստառու ընտանիքներ (պլանային թիվ)		114000	110700	110159	110159	
նպաստառու ընտանիքներ (փաստացի թիվ)		107492	105005	91575	***	

**4. Սոցիալական պաշտպանություն
Հաշմանդամներ և տարեցներ**

Ելնելով ՄԱԿ-ի 2006 թվականի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. Ռազմավարության» դրույթներից, 2011 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները հաշմանդամներին հասարակություն ներառելու ուղղությամբ:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվել են միջոցառումներ նպատակառոտ դրված հանրապետությունում հաշմանդամների սոցիալական ներառման, հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում հաշմանդամների համար մատչելի միջավայրի ստեղծման, նրանց բժշկասոցիալական վերականգնման, կրթական ու զբաղվածության ծրագրերի իրականացման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման և այլ ծառայությունների տրամադրման ուղղությամբ:

ՀՀ կառավարությունը 2011 թվականի սեպտեմբերի 29-ին ընդունել է «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2012 թվականի տարեկան ծրագրի և միջոցառումների ցանկի նախագծերին հավանություն տալու մասին» թիվ 38-Ն արձանագրային որոշումը, իսկ 2011 թվականի դեկտեմբերի 8-ին թիվ 48-Ն արձանագրային որոշմամբ ընդունել է «Աշխատունակության կորստի աստիճանի որոշման հիման վրա

հաշմանդամության սահմանման մոդելին անցնելու հայեցակարգը և հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

2011 թվականի մշակվել է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման շտեմարանում հաշվառված է 176506 հաշմանդամ:

2011 թվականի ընթացքում առաջին անգամ փորձաքննվել է 16861 անձ, որից հաշմանդամ են ճանաչվել 15 363-ը՝ 91,1 %, որը կազմում է հաշմանդամների ընդհանուր թվի 8.7%-ը: Նրանցից 5,6%-ին սահմանվել է հաշմանդամության 1-ին խումբ, 37,6%-ին՝ 2-րդ խումբ, 50,6%-ին՝ 3-րդ խումբ, իսկ 6,2%-ին՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ: Առաջնակի մերժումների տոկոսը նախորդ տարվա համեմատ ավելացել է 1,0%-ով՝ կազմելով 7,0%:

2011 թվականին բժշկասոցիալական փորձաքննության մարմինների կողմից փորձաքննվել է 73379 անձ, որից 3095-ը՝ մինչև 18 տարեկաններ: Նրանց մեջ վերափորձաքննվածների թիվը կազմում է 56649 անձ (2018-ը՝ մինչև 18 տարեկան): Փորձաքննվածներից հաշմանդամ են ճանաչվել 70316 անձ (96%): 2010 թվականի համեմատ 2011 թվականին մերժումների թիվն աճել է 0,3%-ով /

Տարվա ընթացքում իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովում են հավասար պայմաններ և նպաստում նրանց ներառմանը հասարակություն: Մասնավորապես՝ նրանց տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, իրականացվել է բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնում, լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար մի շարք ծրագրեր և այլն:

2011 թվականին վերականգնողական բուժում է ստացել 979 հաշմանդամ, հատկացվել է 15318 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, այդ թվում՝ աչքի պրոթեզավորում է ստացել 90 և ձայնաստեղծ սարքերով ապահովվել 100 հաշմանդամ, լսողական սարքեր են ստացել 1142 մարդ, որից 122-ը՝ եվրոպական արտադրության, 479 հաշմանդամ ստացել են հաշմանդամի սայլակներ, տրամադրվել են այլ պարագաներ: Տեսողությունից 10-ը հաշմանդամ անցել են «Արև» համակարգչային ծրագրի ուսուցման դասընթացներ, որոնց տրամադրվել են համակարգիչներ: Տպագրվել են բրայլյան տառատեսակով գրքեր, տետերեր, «Բյուլետեն» ամսագիրը, ձայնագրվել են «խոսող» գրքեր:

Իրականացվող բոլոր միջոցառումներն ուղղված են եղել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը՝ ապահովելու նրանց լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին բոլոր ոլորտներում:

Տարեցների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեց, անօթևան մարդկանց կյանքի որակի բարձրացումը:

Տարեցների ենթաօլորտում «Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2011 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- **Տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ**

Միայնակ տարեցներին և հաշմանդամներին շուրջօրյա խնամքի ծառայություններ են մատուցվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող չորս տուն-ինտերնատները՝ Երևանի թիվ 1, Նորքի, Վարդենիսի նյարդահոգեբանական և Գյումրու տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատները: Տուն-ինտերնատներում խնամվող 1090 կենսաթոշակառուներ գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո:

- **Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում**

Այս ծրագրով նախատեսված միայնակ տարեցներին տնային պայմաններում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ են մատուցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը Երևան քաղաքում սպասարկում է 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառուի:

- **Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ**

Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատին կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում 2011 թվականին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություն են ստացել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 50 անձ և նրանց ընտանիքների անդամներ:

- **Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ**

Թիվ 1 տուն-ինտերնատին կից անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում 2011 թվականին սպասարկվել է 60 մարդ:

- **ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում**

Պետական աջակցություն է ցուցաբերվել «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ին հանրապետության 8 մարզերում 4200 միայնակ տարեց ու հաշմանդամ կենսաթոշակառուի տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում սպասարկող աշխատողների աշխատավարձը փոխհատուցելու համար:

- **Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում**
Վանաձորի տարեցների տանը 2011 թվականին խնամվել է 55 կենսաթոշակառու:
- **«Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց միանվագ դրամական փոխհատուցում»**

Համաձայն «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի, բռնադատված քաղաքացիներին, նրանց կրած վնասի դիմաց միանվագ տրամադրվել է դրամական փոխհատուցում հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի տասներկուպատիկի չափով (12000դրամ): Դրամական փոխհատուցումը տրվում է միայն մեկ անգամ և միայն բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձին:

- **Երեխաներ**

Երեխաների ոլորտում իրականացվող բարեփոխումների քաղաքականության շրջանակում ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների գերակա խնդիր է համարվել հանրապետության մանկատների բեռնաթափումը, ինչը պայմանավորված է երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրականացմամբ:

Խնդրի լուծման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի N 804-Ն որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» 2005 թվականի մարտի 24-ի N 381-Ն և 2006 թվականի նոյեմբերի 9-ի N 1735-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

ՀՀ կառավարության մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 13-ի նիստի թիվ 14.7/ /91675/-11 արձանագրային որոշման կատարումը ապահովելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011թվականի նոյեմբերի 12-ի թիվ 98-Ա/1 հրամանով «Երևանի «Ձատիկ» մանկատուն» ՊՈԱԿ-ի կանոնադրության մեջ փոփոխություններ են կատարվել:

Փոփոխված կանոնադրության համաձայն մինչև 2014 թվականը մանկատունը կիրականացնի հետևյալ գործառնությունները՝

- 14-18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխայի շուրջօրյա խնամքի աստիճանը,
- կյանքի դժվարին իրավիճակում գտնվող անօթևան 3-18 տարեկան երեխայի մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամքի ապահովումը,
- Երևան քաղաքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 6-18 տարեկան երեխայի ցերեկային խնամքի ապահովումը:

Բնակարանի կարիք ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց բնակարանով ապահովելու հիմնախնդրից ելնելով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասություն վերապահելու մասին» թիվ 341-Ն որոշման ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում բաշխել և հատկացրել է 6 բնակարան՝ ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 983-Ն որոշմամբ սահմանված կարգով:

2011 թվականի կարևոր ձեռքբերումներից է նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրված է 2011 թվականի դեկտեմբերի 28-ին ուժի մեջ մտած՝ «Հայաստան-պարենային ապահովության ծրագիր-2010» ծրագրի ֆինանսավորման Համաձայնագիրը:

Համաձայնագրի նախապայմանների համապատասխան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ. ստեղծվել միջգերատեսչական հանձնաժողով՝ երեխաների իրավունքների պաշտպանության 2012-2016 թթ. ազգային ռազմավարությունը մշակելու և Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կանոնադրությունը վերանայելու նպատակով:

Մշակվել է երեխաների իրավունքների պաշտպանության 2012-2016թթ. ազգային ռազմավարությունը, միաժամանակ մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կանոնադրությունը»:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների և խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծված խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով 2011 թվականի փետրվարի 24-ին ընդունվեց «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006

թվականի հունիսի 22-ի N 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 164-Ն ՀՀ կառավարության որոշումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N 69-Ս/1 հրամանով հաստատվեց «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը», որը տրամադրվեց խնամակալության և հոգաբարձության բոլոր մարմիններին:

2011 թվականին «Վորլդ Վիժըն միջազգային բարեգործական կազմակերպության» հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների և մանկատների բեռնաթափման ծրագիր, որի շրջանակներում 46 երեխա վերադարձել է ընտանիք, ինչպես նաև կանխարգելվել է 250 երեխայի մուտքը խնամքի հաստատություններ: